

ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԵՐԱ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԽԻԿԱՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ռուսաստանյան 1905—1907 թթ. հեղափոխությունը՝ իմպերիալիզմի դաշարչությանի առաջին ժողովրդական հեղափոխությունը, որի 80-ամյակը նշվում է աշխատանքային մեծագործ սխրանքներով, սոցիալիստական հայրենիքի, կոմունիստական կուսակցության և սովետական ժողովրդի, միջազգային կոմունիստական, բանվորական-ազատագրական շարժման պատմության անմուսց էջերից է:

Ռուսաստանի առաջին հեղափոխությունը, որ նախապատրաստվել էր երկու դարերի սահմանագծում, երկրի տնտեսական ու քաղաքական զարգացման ողջ ընթացքով, սասանեց ինքնակալության հիմքերը: «Հեղափոխությունը քաղաքական կյանքի արթնացրեց, — ասված է ՄՄԿԿ Կենտկոմի՝ «Ռուսաստանի 1905—1907 թվականների հեղափոխության 80-ամյակի մասին» որոշման մեջ, — բանվորների ու գյուղացիների ամենալայն զանգվածներին, բնակչության այլ խավերի, նշանավորեց պատմական նոր ժամանակաշրջանի՝ սոցիալական խոր ցնցումների ու հեղափոխական ճակատամարտերի ժամանակաշրջանի սկիզբը»¹:

Ռուսաստանի հեղափոխությունը համաշխարհային պատմության մեջ, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, առաջին մեծ հեղափոխությունն էր, որտեղ քաղաքական-մասսայական գործադուլը արտասովոր խոշոր դեր է կատարել: Ռուսաստանյան հեղափոխությունը իր պրոլետարական բնույթով, «մնում է որպես գալիք եվրոպական հեղափոխության ճախերգանք»²:

1905 թ. հունվարի 9-ի (22-ի) «Արյունոտ կիրակին» ազդարարեց Ռուսաստանի առաջին ժողովրդական հեղափոխության սկիզբը: Այդ օրը հազարավոր բանվորներ Պետերբուրգի բոլոր ծայրերից հանդիսավոր կերպով զնում էին դեպի Չմեռային պալատի հրապարակ՝ ցարին հանձնելու իրենց խնդրագիրը: Ցարը հրամայում է զորքին՝ կրակել անզեն ժողովրդի վրա: Սպանվում են սկիզբի քան հազար, վիրավորվում շուրջ հինգ հազար մարդ: Խաղաղ ցույցի տմարդի զնդակոծումը սպանեց «հայր-ցարի» նկատմամբ ժողովրդի տածած միամիտ հավատը:

1905 թ. հունվարի 9-ի շարագործության լուրը ցնցեց Ռուսաստանը: Պետերբուրգի պրոլետարիատի «Մահ կամ ազատություն» մարտակոչին արձագանքեց ամբողջ Ռուսաստանի բանվոր դասակարգը: Երկրով մեկ հնչեց «Կորչի ցարը» լուզումը:

XIX դ. վերջին Ռուսաստանը դարձել էր իմպերիալիզմի հակասությունների հանգուցակետը, նրա առավել թույլ օղակը: Կապիտալիզմի տնտեսական ու քաղաքական զարգացման անհամաչափությունը, որն ուժեղացել էր իմպերիալիզմի ժամանակաշրջանում, մեծ չափով սրեց հակասությունները իմպերիալիստական տերությունների միջև: 1904—1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմն արագացրեց հեղափոխության բռնկումը: Ռուսաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացման օբյեկտիվ պայմանները, որոնք անհաշտելի հակասության մեջ էին մտել իր դարն ապրած քաղաքական վերնաշենքի հետ, անխուսափելիորեն հասցրին հեղափոխական պայթյունի:

1885 թ. Մորոզովյան հուլիսավոր գործադուլից սկսած, Ռուսաստանի հե-

¹ «Սովետական Հայաստան», 3. I. 1985.

² Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 30, էջ 404.

ղափոխական ուժերը, պրոլետարական ավանգարդի ղեկավարութեամբ, մի շարք ճակատամարտեր մղեցին: Նշենք 1901 թ. օրուխովյան գործադուլը, 1902 թ. Դոնի Ռուստովի և Բաթումի քաղաքական ցույցերը, 1903-ի Հարավային Ռուսաստանի արդյունաբերական խոշոր կենտրոնների, Բաքվի պրոլետարիատի 1904 թ. ղեկամբերյան և այլ գործադուլները: Բաքվի գործադուլը նախափոթորկային կայծակ էր հեղափոխության մեծ մրրիկների նախօրեին: 1905 թ. հունվարի 3-ին գործադուլ սկսվեց Պետերբուրգի խոշորագույն՝ Պուտիլովյան գործարանում: Գործադուլավորներին միացան մայրաքաղաքի ուրիշ գործարանների ու ֆաբրիկաների բանվորները: Գործադուլը համընդհանուր բնույթ կրեց: Ցարական կառավարությունը վճռեց սկզբից ևեթ ճնշել գործադուլները: Վնասակար դեր կատարեցին հայտնի պրոլետարատոր Գապոն քահանան և նրա օգնութեամբ ոստիկանության կազմակերպած «Ռուս ֆաբրիկադործարանային բանվորների ժողովը»՝ զուբատովշիան: Զուբատովը, որը 1917 թ. մարտի 3-ին ատրճանակի կրակոցով վերջ տվեց իր կյանքին, ինքնակալության հավատարիմ ծառաներից էր, Մոսկվայի քաղաքական գաղտնի ոստիկանության պետը: Զուբատովականության՝ «ոստիկանական սոցիալիզմի», եզրափակիչ շրջանը գապոնականությունն էր: Զուբատովը, Տիխոմիրովը և Գապոնը աֆեոդալական սոցիալիզմին ջատագովներն էին: Հեղափոխական պրոլետարիատն իր ավանգարդի՝ բոլշևիկների կուսակցության ղեկավարութեամբ, զինված մարքսիստական-լենինյան տեսութեամբ, ձախողեց բանվորական շարժումը հեղափոխական ուղուց շեղելու թշնամական փորձերը:

Հունվարի 9-ի պատմական իրադարձություններից հետո ալիքաձև աճեցին գործադուլային շարժումները, Ռուսաստանում բռնկվեց ժողովրդական հեղափոխություն, որը պատմության մեջ մտավ որպես նոր տիպի բուրժուազեմոկրատական հեղափոխություն: Միայն հունվար-մարտ ամիսներին գործադուլ արեց 810 հազար արդյունաբերական բանվոր, այսինքն՝ երկու անգամ ավելի, քան նախորդ տասը տարում: Գործադուլային շարժման ավանգարդում էին մետաղագործները:

Վ. Ի. Լենինի բնութագրութեամբ, աշխարհը չէր տեսել գործադուլային մի այնպիսի հզոր շարժում, ինչպես Ռուսաստանում 1905 թ.: Մայիսյան օրերին գործադուլ արեցին ավելի քան երկու հարյուր հազար բանվոր: Գարնանը և աշնանը Օդեսայում, Վարշավայում, Լոձում և այլ քաղաքներում տեղի ունեցան բանվորների զինված ընդհարումներ ցարական զորքերի հետ: Ռուսաստանի պրոլետարիատի առաջավոր շարժերում էին արդյունաբերական խոշոր կենտրոնների՝ Պետերբուրգի, Մոսկվայի, Իվանովո-Վոզնեսենսկի, Վարշավայի բանվորները: 1905 թ. գործադուլ արեց շուրջ երեք միլիոն ֆաբրիկադործարանային բանվոր:

Բանվոր դասակարգի ետևից բարձրանում է գյուղացիությունը: Ագրարային հեղափոխական շարժումները ծավալվեցին ամբողջ երկրում: Դյուղացիներն ավերում էին կալվածատիրական դաստակերտները, գրավում կալվածատերերի հողերը:

Բանվորագյուղացիական շարժումներն իրենց բարերար ազդեցությունն ունեցան բանակի վրա: Բռնկվեցին զինվորական ապստամբություններ: Դրանց բարձրակետը Սևծովյան նավատորմում «Պոտյոմկին» զբահանավի վրա ծագած ապստամբությունն էր, որը, Վ. Ի. Լենինի գնահատմամբ, մեծանշանակ փաստ էր՝ հեղափոխական բանակ կազմակերպելու փորձ:

Ռուսաստանի 1905—1907 թթ. հեղափոխության գագաթնակետը 1905 թ. Մոսկվայի ղեկտեմբերյան զինված ապստամբությունն էր, որը բռնկվեց հոկտեմբերի 17-ի ցարական մանիֆեստից հետո: Զինված ապստամբության միջնաբերդը Կրասնայա Պրեսնյան էր:

1905—1907 թթ. հեղափոխության ընթացքում որպես հեղափոխական իշխանության մարտական մարմիններ ծնունդ առան բանվորական սովետները, այնուհետև գյուղացիների սովետները և զինվորների ղեկուսատաների սովետները, որոնք ապագա սոցիալիստական պետականության նախատիպն էին: Սո-

վետներ ստեղծվեցին Իվանովո-Վոզնեսենսկում, Պետերբուրգում, Մոսկվայում, Դոնի Ռոստովում, Կիևում, Եկատերինոսլավում, Սևաստոպոլում, Կոստրոմայում, Չիտայում, Կրասնոյարսկում, Իրկուտսկում, Սմոլենսկում, Ռևելում և այլ վայրերում:

Հեղափոխության պայքարի բովանդակում կազմավորվեց բանվոր դասակարգի ու գյուղացիության, ինչպես և աշխատավորության ոչ պրոլետարական մյուս խավերի միջև դաշինքը պրոլետարիատի ղեկավար դերի պայմաններում:

Հեղափոխության ժողովրդի ճնշման տակ ցարը ստիպված էր 1905 թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստով, գոնե խոսքով, ժողովրդին խոստանալ խոսքի և մամուլի ազատություն, արհեստակցական միությունների և այլ կազմակերպությունների գործունեության հնարավորություն:

Ռուսաստանի պատմության մեջ առաջին անգամ սկսեցին լույս տեսնել հեղափոխական լեզու թերթեր: Ռուսաստանյան հեղափոխության մարքսիստական լուսաբանության գործում մեծ ավանդ ունի Վ. Ի. Լենինի խմբագրությանը արտասահմանում լույս տեսած «Վպերյոդ» («Առաջ») թերթը, որը հրատարակվել է 1905 թ. հունվարի 4-ից մինչև մայիսի 18-ը:

Հեղափոխության տակտիկական և ստրատեգիայի հարցերի մշակման գործում հսկայական դեր խաղաց ՌՄԴԲԿ III համագումարը: Այն վճռական նշանակություն ունեցավ նաև մենշևիկ պառակտիչների դեմ մղվող պայքարում: Վ. Ի. Լենինը «Սոցիալ դեմոկրատիայի երկու տակտիկական դեմոկրատական հեղափոխության մեջ» գրքում տվեց բուլժևիկյան տակտիկայի փայլուն հիմնավորումը, մենշևիկյան օպորտունիզմի քննադատությունը: Վ. Ի. Լենինը նշում էր, որ Ռուսաստանյան առաջին ժողովրդական հեղափոխությունն իր բնույթով բուրժուադեմոկրատական էր: Նրա նպատակն էր տապալել ցարական ինքնակալությունը և հաստատել դեմոկրատական հանրապետություն, սահմանել ութ-ժամյա բանվորական օր, բռնագրավել կալվածատիրական հողերը: 1905—1907 թթ. հեղափոխությունն իր պայքարի միջոցներով պրոլետարական էր: Պատմության մեջ առաջին անգամ, որպես հեղափոխության հեգեմոն, հանդես եկավ բանվոր դասակարգը՝ զինված մարքսիզմ-լենինիզմի վսեմ գաղափարներով: Հեղափոխության գլխավոր առանձնահատկությունը հենց այն էր, որ նրա հիմնական շարժիչ ուժը և ղեկավարը պրոլետարիատն էր: Պայքարի ուրույն պրոլետարական միջոցը՝ գործադուլը, իր կնիքը դրոշմեց հեղափոխական տարիների քաղաքական բոլոր իրադարձությունների վրա: Ժողովրդի ազատագրական պայքարի ավանգարդում ընթանում էր Վ. Ի. Լենինի ստեղծած ու գլխավորած բուլժևիկների կուսակցությունը, որը գործունեանում իրականացրեց հեղափոխական տեսության միացումը բանվորական շարժման հետ: Համաշխարհային պատմության մեջ դա առաջին հեղափոխությունն էր, որի ընթացքում մարքսիստական կուսակցությունը հանդես եկավ որպես ինքնուրույն քաղաքական ուժ, իր ծրագրով, հստակ ստրատեգիայով ու տակտիկայով: Հեղափոխության տարիներին բուլժևիկների կուսակցությունը համարվում էր ժողովրդի ազատագրության գործին անձնավիրաբար նվիրված առաջավոր բանվորներով: Այսպես, 1905 թ. վերջին Պետերբուրգի կուսակցական կազմակերպությունն ուներ 3000 անդամ, Մոսկվայինը՝ 2.500, Իվանովո-Վոզնեսենսկինը՝ 900, Բաքվի և Խարկովի կազմակերպությունները՝ 1000-ական, Երևանը և Նրա մերձակա շրջանները՝ 280 անդամ:

Ռուսաստանի 1905—1907 թթ. հեղափոխությունը մի ամբողջ դարաշրջան է մեր երկրի ժողովուրդների և կոմունիստական կուսակցության կյանքում: Իրենց եղբայրների՝ ռուս մեծ ժողովրդի քաջակորով զավակների հետ միասին ինքնակալության դեմ պայքարի ելան Ուկրաինայի, Բելոռուսիայի, Մերձբալթիկայի, Անդրկովկասի, Միջին Ասիայի և ազգային մյուս շրջանների բանվորներն ու գյուղացիները: 1905 թվականը միավորեց Ռուսաստանի բոլոր ազգերի բանվորներին, աշխատավոր լայն զանգվածներին: Ռուսաստանի բանվոր դասակարգը, բուլժևիկների կուսակցության ղեկավարությամբ, բարձր պահեց պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը, ստեղծելով սոցիալական

ու ազգային ճնշման դեմ բոլոր ազգերի աշխատավորների պայքարի միասնական ճակատ:

Հեղափոխության տարիներին ամբողջ ուժով դրսևորվեց Վ. Ի. Լենինի տեսական հանճարը, որպես պրոլետարիատի մեծ առաջնորդի և տեսաբանի: Ռուսաստանյան առաջին հեղափոխությունը նշանավորեց մարքսիստական մտքի զարգացման նոր փուլը՝ Լենինյան գաղափարների կենսունակությունը գործնականում ստուգելու, մարքսիզմը նոր, համարձակ դրույթներով հարըստացնելու փուլը: Վ. Ի. Լենինը մշակեց բուրժուադեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերաճելու իր հանճարեղ պլանը:

1905—1907 թթ. հեղափոխությունը լայն արձագանք գտավ Անդրկովկասում, այդ թվում նաև Հայաստանում: Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիները Ռուսաստանի հեղափոխական առաջավոր շեղատներից էին: Բաքվի, Ռիֆիսի, Բաթումի, Քուբայի, Ալեքսանդրապոլի, Շրևանի, Ալավերդու, Ղափանի, Կարսի և այլ քաղաքների պրոլետարիատը, Ռուսաստանի պրոլետարիատի օրինակով, պայքարի ելավ ցարիզմի և բուրժուազիայի դեմ, ուժեղացրեց մարտակառիվը բուրժուական նացիոնալիզմի դեմ, համախմբվեց պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո: 1905 թ. փետրվարին Բաքվում տեղի ունեցավ պրոլետարիատի 50 հազարանոց հսկայական ցույց, որն ընթանում էր «Կորչի ինքնակալությունը» լողունգով: Բաքվին հետևեցին երկրամասի այլ քաղաքներ և շրջաններ: 1905 թ. փետրվար-մարտ ամիսներին գործադուլ արեցին Ալավերդու պղնձահանքերի բանվորները, Սանահինի երկաթուղայինները, 1905 թ. մարտի 20-ից՝ Ալեքսանդրապոլ—Ղարաբեյլիսա երկաթուղային գծամասի, Ալեքսանդրապոլի դեպոյի, ապրիլին՝ Շրևանի Շուստովի, Սարաջևի սպիրտ-կոնյակի գործարանների և մի շարք այլ ձեռնարկությունների բանվորներն ու ծառայողները: Հեղափոխությունն արձաշանք գտավ նաև Ձանգեզուրում, հատկապես Ղափանում:

Ռուսաստանի հեղափոխական շարժումները խթան հանդիսացան Հայաստանում ազատագրական, ագրարային շարժումների ծավալման համար: Հաղթարտի գլուղացիները, տեղի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարությամբ, տակավին հեղափոխության նախօրյակին, ապստամբեցին կալվածատերերի դեմ:

1905 թ. հոկտեմբերի 16—29-ը տեղի ունեցան Հայաստանի երկաթուղային բանվորների ու ծառայողների ժողովներ և միտինգներ, ուր նրանք հանդես եկան տնտեսական ու քաղաքական պահանջներով: Սանահինի երկաթուղայինների գործադուլային կոմիտեն Ռուսաստանի արդյունաբերական խոշոր կենտրոններում ծնունդ առած սովետների օրինակով մոտ երկու ամիս գործում էր իբրև փաստական իշխանություն:

Բոլշևիկյան կազմակերպության և գործադուլային կոմիտեի մարտունակության մասին է վկայում Անդրկովկասի երկաթուղու ծառայության պետին ՌՍԴԲԿ Սանահինի կազմակերպության ուղարկած հեռագիրը, որտեղ ասված էր. «Ծառայողների և բանվորների կողմից պահանջված էր հեռացնել Սանահին կայարանի պետ Մաքսիմովսկուն, բայց մինչև այժմ այդ պահանջը չի կատարված: Հետևողականորեն պահանջում ենք Մաքսիմովսկու հեռացումը»³:

Նոյեմբերին քաղաքական ցույցեր և գործադուլներ արեցին Ալավերդու հանքերի բանվորները:

1905 թ. Ալեքսանդրապոլի բոլշևիկների ղեկավարությամբ կազմակերպված մայիսմեկյան տոնակատարությունը վերածվեց քաղաքական ցույցի: Ապրիլին գործադուլ են անում Ձիթողջյանի գործարանի և քաղաքի մի քանի այլ ձեռնարկությունների բանվորներ, որոնք ընտրում են գործադուլային կոմիտե: Վերջինս մշակում է տնտեսական պահանջներ և ներկայացնում գործարանատիրոջը: 1905 թ. Ալեքսանդրապոլի երկաթուղայինների զարնանային գործադուլը թեև ճնշվեց ցարական ոստիկանների կողմից, բայց հող նախապատ-

³ Վրացական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 26, գ. 6, թ. 36:

րաստեց նույն թվականի հոկտեմբերյան և հետագա քաղաքական ցույցերի ու դործադուլների համար: Հոկտեմբերի 15-ին աշխատանքը դադարեցրին Ալեքսանդրապոլ—Կարս—Նրևան գծամասի բանվորներն ու ծառայողները: Ստեղծվեց գործադուլային կոմիտե: ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպության հոկտեմբերի 16-ի թուղթիկում ասված է. «Մենք, դեպուլի և Ալեքսանդրապոլի կայարանի ծառայողներս, միանալով ռուսական երկաթուղայինների ընդհանուր գործադուլին, հայտարարում ենք, որ մենք ընդունել ենք բոլոր գործադուլավորների որոշումը՝ գործի շանցնել, մինչև չբավարարվեն ներքոհիշյալ մեր այն պահանջները, որոնք հանդիսանում են Ռուսաստանում բնակվող բոլոր ժողովուրդների բարեկեցության գրավականը»⁴: Գործադուլավորների պահանջների մեջ հատկապես ընդգծված էր խոսքի, մամուլի, ժողովների, միությունների ազատությունը: Հոկտեմբերի 15-ից Ալեքսանդրապոլ—Նրևան—Ջուլֆա և Ալեքսանդրապոլ—Կարս գծամասերում իշխանությունը փաստորեն գտնվում էր Ալեքսանդրապոլի բոլշևիկների ձեռքում: Նոյեմբերի 30-ին Ալեքսանդրապոլում կազմակերպված միտինգին մասնակցում էին նաև Կարսի բանվորները:

ՌՍԴԲԿ Նրևանի կազմակերպության կյանքում նշանավոր իրադարձություն հանդիսացավ 1905 թ. մայիսի 12-ին Ստ. Շահումյանի ղեկավարությամբ գումարված քաղաքային ժողովը, որտեղ նա զեկուցեց «ՌՍԴԲԿ խնդիրները հեղափոխության մեջ» թեմայով: Ստ. Շահումյանը հանգամանորեն լուսաբանեց կուսակցության III համագումարի որոշումների նշանակությունը, կուսակցության տակտիկան ու ստրատեգիան, քննադատեց մենշևիկներին, բոլոր տեսակի օպորտունիստներին: Ժողովը ստեղծեց ՌՍԴԲԿ Նրևանի բոլշևիկյան կոմիտե, որն արդյունավետ աշխատանք կատարեց հեղափոխական շարժումների ղեկավարման գործում:

1905 թ. մարտին Նրևանում սկսված գործադուլային շարժումները գնալով ծավալվեցին և ընդգրկեցին նորանոր ձեռնարկությունների բանվորների ու ծառայողների: Փոստ-հեռագրատան՝ նոյեմբերի 15-ից սկսած գործադուլը շարունակվեց մինչև դեկտեմբերի 23-ը: Ղափանի հանքափորները, որոնք 1905-ին գերազանցապես տնտեսական պահանջներ էին ներկայացնում, 1907-ին ավելի ակտիվացրին իրենց գործունեությունը: Մարտին նրանք ընդհանուր գործադուլ արեցին՝ ներկայացնելով 27 կետից կազմված գրավոր պահանջ: Բանվորներին հետևեցին գյուղացիները:

Բանվորագյուղացիական հեղափոխական շարժումներն արձագանք գտան նաև Հայաստանի տարածքում՝ Ալեքսանդրապոլում, Կարսում, Նրևանում և այլ վայրերում տեղակայված զորամասերում: Զինվորական մասերում հեղափոխական աշխատանքն ավելի ուժեղացավ «Պոտյոմկին» զրահանավի ապստամբությունից և 1905 թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստից հետո: Քաղաքական գործադուլներն ու ցույցերը զորքին հեղափոխական պայքարի հորձանուտն էին քաշում: Հայաստանի կայազորների զինվորները, բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ, պահանջում էին զորացրել բոլոր նրանց, ում ծառայության ժամկետը լրացել էր: 1905 թ. նոյեմբերին Ալեքսանդրապոլի երկաթուղային բանվորների հետ միասին ցույցի դուրս եկան 153-րդ, 229-րդ, հրետանային 150-րդ և այլ գնդերի զինվորները: Նոյեմբերի 28-ին 153-րդ հետևակային գնդի զինվորները, բոլշևիկյան խմբի ղեկավարությամբ, առաջադրում են պահանջներ՝ զորքը դուրս չբերել բանվորների և գյուղացիների դեմ, ներում չնորհել քաղաքական բանտարկյալներին, զորացրել այն զինվորներին, որոնց ծառայության ժամկետները անցել են, տալ խոսքի, մամուլի, ժողովների ազատություն: Այս պահանջները պաշտպանեցին Կարսի և այլ կայազորների զինվորները: Ալեքսանդրապոլի և Կարսի զորամասերում ստեղծվեցին պինվորական հեղափոխական սովետներ, որոնց մեջ մեծամասնություն էին կազմում բոլշևիկները:

⁴ «Революционное движение в Армении 1905—1907 гг.», Ереван, 1955, с. 146—147.

Ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին Հայաստանի աշխատավորության պայքարը գլխավորելու ասպարեզում հզոր ուժ էին մամուլը, հեղափոխական կոչերն ու թոուցիկները: Ստ. Շահումյանի, Ի. Ֆիոլետովի, Ա. Զափարիձեի, Մ. Ադիգբեկովի, Ս. Սպանդարյանի, Ս. Օրջոնիկիձեի, Ա. Ծուլուկիձեի, Ս. Կասյանի և հեղափոխական այլ գործիչների ջանքերով հիմք է դրվում Անդրկովկասի բոլշևիկյան մամուլին, որի էջերում արտացոլվում են հեղափոխական շարժումները: Բոլշևիկյան «Պրոլետարիատի կոիվը», «Բակինսկի ռաբոչի», «Բակինսկի պրոլետարի», «Կայծ», «Նոր խոսք», «Կոչ-դեվիթը», «Օրեր» և այլ թերթեր լուսաբանում էին Հայաստանի բանվորական և գյուղացիական հեղափոխական շարժումները: Երկրամասում մարքսիստական-լենինյան գաղափարների տարածման գործում մեծ էր ՌՍԴԲԿ կովկասյան միութենական կոմիտեի լեգալ օրգան «Կավկասկի ռաբոչի լիստոկ» թերթի դերը, որը լույս է տեսել 1905 թ. հեղափոխական շարժումների բուռն ժամանակաշրջանում: Նրա էջերում են հրատարակվել Ստ. Շահումյանի «Հեղափոխության նոր հաղթությունը», «էվոլյուցիոնիզմը և հեղափոխականությունը հասարակական գիտության մեջ», «Ութժամյա բանվորական օրը և բանվորների պետական ապահովագրումը» և այլ տեսական հոդվածներ: Հայ ականավոր մարքսիստներ Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Բ. Կոնյանցը և ուրիշներ իրենց աշխատություններում պրոպագանդում էին մարքսիզմ-լենինիզմը, բոլշևիկյան կուսակցության տակտիկական ու ստրատեգիան, արտացոլում հեղափոխական իրադարձությունները: Լենինիզմի սկզբունքների պաշտպանությանն էին նվիրված Ս. Սպանդարյանի «Հեղափոխության ալիքը բարձրանում է», «Ինքնակալությունը և գյուղացիությունը», «Հեղափոխություն մի թաս ջրում» և այլ հոդվածներ: Գյուղացիության հեղափոխական պայքարի կազմակերպման առումով նշանակալից էր Ս. Սպանդարյանի «Մեր դերը գյուղերում» հոդվածաշարը:

Հեղափոխության բովում կոփվող ժողովուրդների բարեկամությունը լուսաբանվում էր Ստ. Շահումյանի, Ա. Զափարիձեի, Մ. Ադիգբեկովի և այլոց ջանքերով 1905 թ. հրատարակված «Կոչ-դեվիթ» թերթի էջերում: Անդրկովկասի հեղափոխական շարժումները արտացոլում էին գտել ՌՍԴԲԿ կենտրոնական մամուլում՝ «Վպերյոդ» և «Պրոլետարի» թերթերում, ինչպես և «Նովայա ժիզն», «Ռաբոչի» և այլ պարբերականներում: «Ռաբոչի» թերթը (Մոսկվա) անդրադարձել է Վրաստանի և Հայաստանի գյուղացիական շարժումներին: «Հեղափոխությունը և հակահեղափոխությունը Ռուսաստանում» հոդվածում (№ 3, 1905) նշվում էր, որ Անդրկովկասում ևս տեղի են ունենում փողոցային մարտեր, բարիկադներ են կառուցվում և արյունալի կոիվներ մղվում:

Բուրժուազգայնական կուսակցությունները, նրանց վայ-գաղափարախոսները մեծ վնաս էին հասցնում հեղափոխական շարժումներին: Նրանք ամեն ինչ անում էին արգելակելու քաղաքական ցույցերն ու գործադուները, աշխատավոր մասսաների ուղարկությունը հեղափոխությունից շեղելու և ազգային նեղ շրջանակներում պարփակելու համար: Սակայն նրանց շահողվեց մասսաներին շեղել հեղափոխական ուղուց, մասսաներ, որոնք փողոց էին դուրս եկել ինքնակալությունը տապալելու վճռական պահանջով:

Չնայած կրած պարտությանը, Ռուսաստանյան առաջին հեղափոխությունը համաշխարհային պատմական մեծ նշանակություն ունեցավ: «Առանց 1905 թվականի «գլխավոր փորձի»,— գրել է Վ. Ի. Լենինը,— 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակն անհնարին կլիներ»⁵: Ռուսաստանյան առաջին հեղափոխության փորձն իր անանց նշանակությունը այսօր էլ պահպանում է այն ժողովուրդների համար, ասված է ՍՍԿԿ կենտկոմի որոշման մեջ, որոնք հանդես են գալիս հանուն սոցիալիստական ու ազգային ազատագրության, հանուն սոցիալիզմի և խաղաղության⁶:

⁵ Վ. Ի. Լենին, ԵԺ, հ. 41, էջ 11:

⁶ «Սովետական Հայաստան», 3. I. 1985.